



Գերաշնորհ
Ս. Վահան Եպս Յովհաննէսեան, Առաջնորդ
Հայրապետական Պատուիրակ
Արեւմտեան Եւրոպայի

Ս. ՅԱԿՈԲԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԼԻՈՆԻ ՄԷՋ




Կիրակի 18 Յունուար 2016-ին Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցին տօնախմբեց իր անուանակոչութեան Ս. Յակոբի օրը տեւած տօնակատարութիւնները սկսան Ս. Պատարագով, զոր մատուցեց Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեան, օգնական ունենալով հոգեւոր հովիւր Ս. Բասիակ Ա. Քինյ. Հեթիմեանը եւ եկեղեցոյ սարկաւազները: Պատարագի ասարտին Սրբազան Հայրը քարոզեց, փոխանցելով օրուան աստուածաշնչական հաստատման պատգամը այսօրուան կեանքին հետ կապելով: Քարոզէն ետք խորանին վրայ տեղի ունեցաւ մատաղօրհնութիւն: Ապա հաւատացեալները հրաւիրուեցան եկեղեցոյ կից սրահը, ուր պատրաստուած էր մատաղի յատուկ ճաշ, որու ընթացքին իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր՝ արտասանութիւններով եւ երգերով: Ոմանք խօսք առին եւ փոխանցեցին իրենց սրտի խօսքը: Յայտագրի ընթացքին Օրհնական Խորհուրդի ատենապետ Պրն. Օսմանճեան բեմ հրաւիրեց Վահան Սրբազանը, որպէսզի 4 անձնուէր ազգայիններու յանձնէ «Ս. Վարդան Մամիկոնեան» թեմական շքանշան, գնահատանքի գիրքերով հանդերձ: 4 անձերն են Անահիտ Պահատուրեան, Աւետիս Տօնապետեան, Ժաք Սոկոնեան եւ Յովհաննէս Մեզուեան: Իրենց կը յայտնենք մեր սրտագին շնորհատրութիւնները: - Տեսնող ովսկըր դիտել ու համար սխալել պ ստեղ:

ԽՈՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՀԱԻԱՔ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ



Ֆրանսայի թեմի գանազան ծուխերէ 35 խորանի ծառայողներ եւ կարգ մը հոգեւորականներ Առաջնորդ Սրբազանի գլխաւորութեամբ հաւաքուեցան Վալանսի մէջ 25-26 Դեկտեմբեր 2016-ին, իրագործելու համար խորանի ծառայողներու թեմական 3-րդ հաւաքը: Մասնակցողները ժամանեցին Կիրակի երեկոյեան եւ առաջին նիստը սկսաւ ժամը 19-ին, Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի բացման աղօթքով: Յայտագրին մաս կը կազմէին Աստուածաշունչի սերտողութիւն Առաջնորդական Փոխանորդ Հոգշ. Ս. Գրիգոր Արք. Խաչատրեանի գլխաւորութեամբ, խորանի ծառայողներու պաշտպան տուրքին նախասարկաւազ եւ առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի մասին դասախօսութիւն Լիոնի հոգեւոր հովիւ Ս. Բասիակ Ա. Քինյ. Հեթիմեանի կողմէ, Հայ Եկեղեցոյ մէջ սարկաւազներու դերին, անոնց պատրաստութեան եւ ծառայութեան դիմագրաւած մարտահրաւերներու մասին դասախօսութիւն եւ Ս. Օննդեան ճրագալոյցի ճաշու շարականի ուսուցում Մարսէլի Մայր եկեղեցոյ երգչախումբի ղեկավար Խաչիկ Երմազեանի կողմէ: Համագումարի յայտագրին մէջ կային նաեւ աղօթքի եւ երկխօսութեան պահեր եւ ազատ ժամեր, որպէսզի մասնակիցները աւելիով ծանօթանան իրարու: Ծնորհակալութիւն բոլոր մասնակիցներուն եւ դասախօսներուն: Յատուկ շնորհակալութիւն Վալանսի հոգեւոր հովիւ Ս. Անդրանիկ Քինյ. Մալճեանին եւ Վալանսի Օրհնական Խորհուրդին իրենց ընդունելութեան համար: - Տեսնող ովսկըր դիտել ու համար սխալել պ ստեղ:

ԹԵՄԱԿԱՆ ՆՈՐ ԱՂՕԹԱԳԻՐՔ



Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը ծանուցանէ հրատարակութիւնը «Ամէնօրեայ Աղօթքներ» գրքի, որ հայկական ասանդական աղօթքներու հաւաքածոյ մըն է քաղուած Հայ Եկեղեցոյ ժամերգութիւններու գանազան բաժիններէն: Այս աղօթքները գրքին մէջ մէկտեղուած են իրենց գրաբար բնագիրով եւ արեւմտահայերէն ու ֆրանսերէն թարգմանութիւններով, խմբագրութեամբ Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցոյ հոգեւոր հովիւ Ս. Յուսիկ Քինյ. Սարգսեանի: Իր գեղեցիկ կողովով եւ Առաջնորդ Սրբազան Հօր Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի յառաջարկով շատ դիւրին ընթեռնելի աղօթագիրք մըն է, իսկ գեղեցիկ էջադրումը աւելի կը դիւրացնէ թարգմանութեան հետեւիլը: Շատ գործածական գիրք մըն է որ պէտք է գտնուի ամէն հայկական տունի մէջ, յատկապէս պատանիներու եւ երիտասարդներու համար: Այս աղօթագիրքը պիտի օգնէ մեր զաւակներուն եւ թոռներուն սորվելու եւ հասկնալու մեր ասանդական աղօթքները: Փափաքողները կրնան ստանալ Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցին: Յաւելեալ տեղեկութիւններու համար կապ հաստատել Փարիզի ծուխին հետ հեռաձայնով կամ համացանցով:

Ս. ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ



2000 տարիներէ ի վեր հայերը Յիսուսի Ծնունդը եւ Աստուածայայտնութիւնը կը տօնեն Յունուար 6-ին, համաձայն քրիստոնէական հնագոյն արձանագրութիւններու: Քանի որ Աստուածաշունչը չի նշեր Յիսուսի ծննդեան ճշգրիտ թուականը, Յիսուսի ծնունդն ու մկրտութիւնը կը տօնուէին նոյն օրը որպէս Աստուածայայտնութեան տօն, որովհետեւ երկու դէպքերն ալ կը նկատուէին որպէս Աստուծոյ յայտնութիւնը իր ժողովուրդին: Եկեղեցին արեւմուտքի մէջ Յիսուսի Ծնունդը փոխադրեց 25 Դեկտեմբերին՝ փոխարինելու համար արեւի պաշտամունքի նուիրուած մեծ տօնախմբութիւնը եւ անոր կապուած սովորութիւնները: Այս փոփոխութիւնը չազդեց Արեւելքի եկեղեցիներուն: Ս. Օննդեան նախորդ գիշերը կը տօնենք ճրագալոյցը, որ ասանդակութեան մէջ կը ներկայացնէ ճրագները վառելը: Ս. Օննդը պիտի տօնուի մեր թեմի բոլոր գործօն եկեղեցիներուն մէջ 5-6 Յունուարին: Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցոյ մէջ ճրագալոյցին պիտի պատարագէ Առաջնորդական Փոխանորդ Հոգշ. Ս. Գրիգոր Արք. Խաչատրեան, Հինգշաբթի 5 Յունուար 2017-ին: Ուրբաթ օր Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեան պիտի պատարագէ եւ պիտի նախագահէ օրօրհներէն, որ կը խորհրդանշէ Յիսուսի մկրտութիւնը: Կիրակի 8 Յունուարին Մայր եկեղեցոյ մէջ պիտի պատարագէ հոգեւոր հովիւ Ս. Յուսիկ Քինյ. Սարգսեանը: Ժամանակացոյցի մանրամասնութեանց համար սեղմել այստեղ: Ամէն ճիգ թափեցէք ներկայ ըլլալու այս արարողութիւններէն գէշ մէկուն:.

ՀԱՅԿԱԿԱՆ Ա ԾԱՌԱՎ- ԲԱՅԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՏՈՒԹԻՒՆ




Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը յիշեցնէ մեր ընթերցողներուն եւ հաւատացեալներուն, որ ըստ օրէնքի Ֆրանսայի հայկական համայնքի անդամները օրինաւորապէս կրնան իրենց աշխատանքէն բացակայիլ 2017-ի հետեւեալ տօներուն.-

- Ուրբաթ 6 Յունուար – Ս. Ծնունդ
- Հինգշաբթի 23 Փետրուար – Ս. Վարդանանց
- Երկուշաբթի 24 Ապրիլ – Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչում

Հետեւաբար, մեր հաւատացեալներուն կ'առաջարկենք արտօնութիւն առնել Յունուար 6-ի համար եւ մասնակցիլ Ս. Օննդեան արարողութիւններուն, յարգելով մեր հայրերէն ժառանգած ասանդակութիւնները: Ձեր հետ բերէք նաեւ ձեր ընտանիքն ու զաւակները, որպէսզի անոնք ալ սորվին մեր ասանդակութիւնները:

Ա ԾԱՌԱՅՈՒ ԸՆԹԻՔ – ՀԻՆԳՇԱԲԹԻ 5 ՅՈՒՆՈՒԱՐ, ՃՐԱԳԱԼՈՅՑ



Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբը ուրախութեամբ կը հրաւիրէ ձեզ Ս. Օննդեան ճրագալոյցի ընթերցման, Հինգշաբթի 5 Յունուար 2017-ի ժամը 19:30-ին, բարձր հովանաւորութեամբ Ֆրանսայի Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի: Երեկոն իր երգ-երաժշտութեամբ պիտի ձուլան ԱՌԷՆը, պարելու եւ զուարճանալու առիթ տալով ներկայներուն: Պիտի հրամցուի համեղ ընթերցք եւ բաց խմիչք: Գեղեցիկ առիթ մըն է նոր ծանօթութիւններ հաստատելու եւ հանդիպելու հին ծանօթներու: Ընթերցքը տեղի պիտի ունենայ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ, 15 rue Jean Goujon, 75008 Paris. Տեղերը սահմանափակ են, ապահովելու համար պէտք է շուտով հեռաձայնել 01 43 59 67 03 թիւին: Տեղերը ապահովուած կը սեպուին վճարումէ ետք: Չէրէրը գրել Comité des Dames-ի անունով: Սակ՝ 50 եւրօ: 16 տարեկանէն վար՝ 30 եւրօ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՆԴՊՈՒՄ



Ուրբաթ 23 Դեկտեմբերին մեր Առաջնորդը՝ Վահան Սրբազան հաճոյքն ունեցաւ հրաւիրելու մեր երիտասարդութիւնը միասնաբար դիտելու « Pôle Express » ֆիլմը: Բազմաթիւ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ հաւաքուած էին այս ֆիլմին ընդմէջէն ապրելու Ս. Օննդեան մթնոլորտի մէջ: Հիւրասիրութիւն մըն ալ կազմակերպուած էր, քաղցրացնելու համար քիմքերը մասնակիցներուն: Ֆիլմի ցուցադրութենէն ետք երիտասարդներն ու երիտասարդուհիները դուրս եկան առաջնորդարանէն եւ պտոյտի ելան դէպի Շանզէլիզի Կադանդի շուկան: Ապա անոնք նստեցան Café FIAT (FIAT CAFE / Motor Village Champs Elysée), գաւաթ մը խմիչքի շուրջ խօսակցութիւնները շարունակելու համար: Սրբազան Հօր ընկերակցած երիտասարդները որոշեցին նուազագոյնը ամիսը անգամ մը կրկնել այս հանդիպումները, իրար քով գալու եւ անմոռանալի ժամեր անցընելու նպատակով:

Ի՞ՆՊԷՍ ԻՐԱՐ ԲԱՐԵՒԵԼ Ա ԾԱՌԱՎԻՆ



Մեր ժողովուրդին մէջ բազմաթիւ սովորութիւններ եւ ասանդակութիւններ ստեղծուած են մեր քրիստոնէական հաւատքին ընդմէջէն: Օրինակի համար, դարերէ ի վեր Ս. Օննդդը 8 օրերուն հայեր երբ իրար կը բարեւեն, կըսեն.- «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ», դիմացինը կը պատասխանէ՝ «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Հետեւաբար, նոյնիսկ եթէ ոմանց համար նորութիւն է, եկէք այս տարի Ս. Օննդդի պատարագէն ետք իրար ողջունենք ըսելով՝ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

ԿՐԻՔ ՊՍԵՂԱՍԵՐ...

- Առաջնորդ Սրբազանն ու Առաջնորդի Գրասենակի իր կամուրջ օգնականները բոլորիդ կը մտաբան շնորհաւոր Նոր Տարի եւ Ս Օննդդ: Առաջնորդ Սրբազանի Ս Անդեան [Ֆրանսերէն պատգամ կարդալ ու համար սեղմել պ ստեղ](#), իսկ [հայ երկերը՝ պ ստեղ](#):
- Անոք որոնք կը փախին մեր լրատու թերթիկը ստանալ, թող բարեհաճին իրենց համացանցայ ին հասցէն ու դարկել bureauduprimat@diocesearmenien.fr հասցէին:

